ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №ԱՆ ԴՏՊ-ՀԳԳ-1

ք.Երևան

Առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող Վահե Հակոբանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աննա Շիրինյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի №1515-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» ծրագրի ապահովման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է 2019 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ» ծրագրի «Գիտաբժշկական գրադարանային ծառայություններ» միջոցառման (Ծրագրի միջոցառում) իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել՝ մինչև 43,564,900.0 (քառասուներեք միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագրի միջոցառումն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումը և դրա ծառայությունների ու հետազոտությունների ցանկը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված №1-ում, վճարման ժամանակացույցը՝ Հավելված №2-ում (կցվում են Excel ֆայլով):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Ծրագրի միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Ծրագրի միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի միջոցառումների իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրի միջոցառումներով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրի միջոցառումներով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրի միջոցառումներով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրի միջոցառումներով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Ծրագրի միջոցառման մասին սույն պայմանագրի 2.4.4. կետում նշված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել, դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն, իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի միջոցառումների և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի միջոցառման շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրի միջոցառումով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով, ընդ որում ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

- աշխատավարձ,
- հարկային պարտավորություններ,
- դեղերի և բժշկական նշանակության պարագաների, ապրանքների գնում,
- Այլ գործառնական և վարչական ծախսեր.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Ծրագրի միջոցառման մասին աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություններ՝ (ամսական/տարեկան)՝ Հավելված № 3-ի, ֆինանսական հաշվետվության (ամսական/տարեկան)՝ Հավելված № 4-ի, վճարման հայտի (ամսական)՝ Հավելված № 5-ի, ծառայությունների մատուցման մասին հանձնման-ընդունման ակտի (եռամսյակային)՝ Հավելված № 6-ի (կցվում են Excel ֆայլով): Նշված հավելվածներով ներկայացվող հաշվետվությունների վերջնաժամկետները սահմանվում են Հավելված № 7-ում.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված

անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.8 սույն պայմանագրի Ծրագրի միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, այդ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները վերադարձնելու պետական բյուջե, ոչ ուշ, քան 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրի միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են Ծրագրի միջոցառման իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրի միջոցառումներով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և Ծրագրի միջոցառումով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված Ծրագրի միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Ծրագրի միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, իրականացման ժամկետով տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

6.2. Պայմանագրով նախատեսված միջոցառումները ավարտվում, դրանց հետ կապված տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվում և դրանց իրականացման

արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները հաշվարկվում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Կառավարության կողմից հաստատված Ծրագրի միջոցառումը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին՝	**Կազմակերպություն՝**
Առողջապահության նախարարություն	«Հանրապետական գիտաբժշկական
Ք.Երևան,Կառավարական շենք 3	գրադարան» ՊՈԱԿ, ք.Երևան, Ռուբինյանց 29/3
ֆինանսների նախարարության	ֆինանսների նախարարության
Կենտրոնական գանձապետարանի	Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն	գործառնական վարչություն
Հ/Հ 900011105278	Հ/Հ 900018001967
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02510167
Առողջապահության նախարարության	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____	SHIRINYAN ANNA 730754006 _____ Աննա Շիրինյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
. . 07.02. 2019թ.ՈԱՆ ԴՏՊ-ՀԳԳ-1
Պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
01.01.2019թ.-25.12.2019թ.-ի
ժամանակահատվածի աշխատանքային
պլան

Իրականացվելիք Ծրագրի միջոցառման							
N	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը			ակնկալվող կողմնորոշիչ արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը
			Ծառայությունների /հոտազոտությունների նկարագիր	Չափման միավոր	2019թ.-ի տարեկան կողմնորոշիչ թիվ/չափաքանակ		
1	Գիտաբժշկական գրադարանային ծառայություններ	1.Անվտանգ պահպանել գրադարանային հավաքածուի 554567 միավոր գրականությունը: 2.Գրադարանային հավաքածուի պահպանությունն ապահովելու նպատակով իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 10000 միավոր գրականության ախտահանում, 200 միավոր գրքերի և ամսագրերի մասնակի վերանորոգում: 3. Գրադարանի հավաքածուի ամենամյա ստուգումների շրջանակներում ապահովել ընթերցասրահում տեղակայված 2077 միավոր գրականության և գրապահոցում տեղակայված 45946 միավոր ամսագրերի առկայությունը: 4. Գրադարանի կանոնադրական խնդիրներին համապատասխան գրադարանային հավաքածուի համալրման շարունակական գործընթացն	Ընթերցողների թիվ	մարդ	7 000	7 000	25.12.2019թ.

2		ապահովելու նպատակով իրականացնել նյութական կրիչների ձեռք բերում, ինչպես նաև Հայաստանում հրատարակվող 17 անուն թերթերի ու ամսագրերի և Ռուսաստանի Դաշնությունում հրատարակվող ոչ պակաս քան 16 անուն բժշկական պարբերականների բաժանորդագրություն և ոչ պակաս, քան 227 միավոր գրականության ձեռքբերում: 5. Ապահովել գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների մատուցման գործընթացի անընդհատություն՝ կազմակերպելով ոչ պակաս, քան 7000 ընթերցողի սպասարկումը: 6. Ապահովել գրադարանային հավաքածուի ոչ պակաս, քան 250000 միավոր հայերեն, ռուսերեն, անգլերեն գրականության սպասարկումը: 7.«Ինտերնետ» համացանցի միջոցով ապահովել կենսաբժշկական էլեկտրոնային տեղեկատվության որոնումը և տրամադրումը ընթերցողներին, ոչ պակաս, քան 25000 միավոր: 8. Համակարգչային տեխնոլոգիաների միջոցով իրականացնել ոչ պակաս, քան 15000 միավոր գրականության մատենագիտական տվյալների մուտքագրումը ՀԳԲԳ-ի էլեկտրոնային գրացուցակում և «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցում»: 9. Իրականացնել ամբողջական տեքստերի տեղադրումը էլեկտրոնային գրացուցակում /7 անուն հայրենական բժշկական ամսագրի ոչ պակաս, քան 400 հոդված/, ընթերցողներին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու նպատակով: 10. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարել Պետական կազմակերպության կողմից սահմանված մեթոդական ցուցումներին համապատասխան:	Գրադարանային ֆոնդերի քանակ (գրքերի, ամսագրերի, թերթերի և այլն)	միավոր	554 567	554 567	
3			Գրականության համալրում,	միավոր	227	227	
4			Գրքատածք	միավոր	88 870	88 870	

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան,Կառավարական տուն 3,

Բանկ՝ ֆինանսների նախարարության

կենտրոնական գանձապետարանի

գործառնական վարչություն

Հ/Հ 900011105278

ՀՎՀՀ 02507171

ԱՆ գխավոր քարտուղարի ժ/պ՝

HAKOBYAN VAHE 3514770623

Digitally signed by HAKOBYAN VAHE 3514770623
DN: cn=HAKOBYAN VAHE 3514770623, c=AM
Date: 2019.02.20 15:08:23 +04'00'

____

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Հանրապետական գիտաբժշկական գրադարան»

ֆինանսների նախաառաուութաան

Կենտրոնական գանձապետարանի

գործառնական վարչություն

Հ/Հ 900018001967

ՀՎՀՀ 02510167

Տնօրեն՝

SHIRINYAN ANNA 7307540096

____________ Աննա Շիրինյան

(ստորագրություն)

Հավելված №2
«07» «02» 2019թ. կնքված
№ ԱՆ ԴՏՊ-ՀԳԳ-1 պայմանագրի

Առողջապահության նախարարության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ին 2019 թվականի Գիտաբժշկական գրադարանային ծառայությունների ապահովման համար հատկացվող դրամաշնորհի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ամիսը	Գումարը (հազ. դրամ)
1	Փետրվար	7,262.3
2	Մարտ	7,262.3
3	Ապրիլ	18,153.5
4	Մայիս	18,153.5
5	Հունիս	18,153.5
6	Հուլիս	29,044.7
7	Օգոստոս	29,044.7
8	Սեպտեմբեր	29,044.7
9	Հոկտեմբեր	43,564,9
10	Նոյեմբեր	43,564,9
11	Դեկտեմբեր	43,564,9
	Ընդամենը	43,564.9

Պետական մարմին՝

Առողջապահության նախարարություն
Ք.Երևան,Կառավարական շենք 3
ֆինանսների նախարարության
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011105278
ՀՎՀՀ 02507171
Առողջապահության նախարարության
Գլխավոր քարտուղար՝

HAKOBYAN VAHE 3514770623
Digitally signed by HAKOBYAN VAHE 3514770623
DN: cn=HAKOBYAN VAHE 3514770623, c=AM
Date: 2019.02.20 15:08:38 +04'00'

Կազմակերպություն՝

«Հանրապետական գիտաբժշկական
գրադարան» ՊՈԱԿ
ֆինանսների նախարարության
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900018001967
ՀՎՀՀ 02510167
Տնօրեն՝

SHIRINYAN ANNA 7307340096
_____ Աննա Շիրինյան

Հավելված 3

ԱՆ «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ
Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն (ամսական/տարեկան)
. .2019թ.- . .2019թ.-ի ժամանակահատվածի համար

N	**Ծառայության/հետազոտության անվանումը**	**Չափման միավոր**	**Գին (ՀՀ դրամ)**	**2019թ.-ի կողմնորոշիչ թվաքանակ/չափաքանակ**	**2019թ.-ի փաստացի թվաքանակ/չափաքանակ**	**Ընդամենը գումար (հազար դրամ)**	**Շեղումների բացատրություն, լրացվում է տարեկան արդյունքների համար**
1	2	3	4	5	6	7	8
1	Ընթերցողների թիվ	մարդ					
2	Գրադարանային ֆոնդերի քանակ (գրքերի, ամսագրերի, թերթերի և այլն)	միավոր					
3	Գրականության համալրում,	միավոր					
4	Գրքատաճք	միավոր					

*«Գին» և «Ընդամենը գումար» (4 և 7) սյունակները կարող են չլրացվել

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան,Կառավարական տուն 3,
Բանկ՝ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011005278

HAKOBYAN VAHE 3514770623 Հ/Հ 02507171

Digitally signed by HAKOBYAN VAHE 3514770623
DN: cn=HAKOBYAN VAHE 3514770623, c=AM
Date: 2019.02.20 15:08:50 +04'00'

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ, Ռուբինյանց 29/3

ֆինանսների նախարարության

Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Հ/Հ 900018001967

ՀՎՀՀ 02510167

Տնօրեն՝

SHIRINYAN ANNA 7307540096 _____ Աննա Շիրինյան

(ստորագրություն)

Հավելված 4
. .07.02. 2019թ. N ԱՆ ԴՀՊ-
ՀԳԳ-1 պայմանագրի

Ֆինանսական հաշվետվություն

(ամսական, տարեկան)

Կազմակերպության անվանում «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ
Ծրագրի միջոցառման անվանում Գիտաբժշկական գրադարանային
Դրամաշնորհի հատկացման ԱՆ ԴՏՊ-ՀԳԳ-1
Հաշվետու ժամանակահատված . .2019թ.- . .2019թ.
Պահանջվող գումարի ժամանակահատված

ՀՀ դրամ

N	Ընդամենը բյուջե՝ դրամաշնորհային միջոցներ	Հաշվետու ժամանակահատվածի բյուջե՝ դրամաշնորհային միջոցներ	Հաշվետու ժամանակահատվածի փաստացի ծախսեր՝ դրամաշնորհային միջոցներ	Հաշվետու ժամանակահատվածի բյուջեի և փաստացի ծախսերի տարբերություն	Ընդամենը փաստացի ծախսեր	Ընդամենը բյուջեի և ընդամենը փաստացի կատարված ծախսերի տարբերություն	Դիտողություններ, տարբերությունների հիմնավորումներ
1	2	3	4	5=3-4	6	7=2-6	8
1							
Ընդամենը		0	0	0	0	0	0

Պետական մարմին

Առողջապահության
նախարարություն

Հասցե՝
Բանկ՝ ֆինանսների
Հ/Հ 900011005278
ՀՎՀՀ 02507171

HAKOBYAN VAHE 3514770623
Digitally signed by HAKOBYAN VAHE 3514770623
DN: cn=HAKOBYAN VAHE 3514770623, c=AM
Date: 2019.02.20 15:10:06 +04'00'

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Հանրապետական
գիտաբժշկական
գրադարան» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան,
ֆինանսների
Հ/Հ 900018001967
ՀՎՀՀ 02510167

Տնօրեն՝

_____ Աննա Շիրինյան

(ստորագրություն)

Հավելված 5
. .07.02. 2019թ. ՈԱՆ ԴՏՊ-
ՀԳԳ-1 Պայմանագրի

Վճարման հայտ (ամսական)

Կազմակերպություն «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ
Ծրագրի միջոցառման անվանում Գիտաբժշկական գրադարանային ծառայություններ
Դրամաշնորհի հատկացման պայմանագրի համար ԱՆ ԴՏՊ-ՀԳԳ-1
Հաշվետու ժամանակահատված
Պահանջվող գումարի ժամանակահատված

ՀՀ դրամ

N	Ծրագրի միջոցառում	Ընդամենը բյուջե	Առողջապահության նախարարությունից ստացված ընդհանուր գումար	Ընդամենը ծախսեր	Մնացորդ	Տվյալ ժամանակահատվածի գնահատված ծախսեր	Պահանջվող ընդհանուր գումար	Լրացուցիչ տեղեկություններ
1	2	3	4	5	6=4-5	7	8=7-6	9
	Գիտաբժշկական գրադարանային ծառայություններ	43 564 900	0	-	-		-	
ԸՆԴԱՄԵՆԸ								

Տնօրեն SHIRINYAN ANNA 7307540096 ստորագրություն

Հաշվապահ _____ ստորագրություն
Ամսաթիվ

Հավելված №6
«07» «02» 2019թ. կնքած
№ ԱՆ ԴՏՊ-ՀԳԳ-1 պայմանագրի
(Եռամսյակային ձև)

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ №

« » № պայմանագրով
նախատեսված ծառայությունների կատարման վերաբերյալ

_____
(ժամանակահատվածը)

_____
(կազմակերպության անվանումը)

		Գումարը (ՀՀ դրամ)
1	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում պատվիրատուի պարտքը կատարողին	
2	Հաշվետու ժամանակաշրջանում մատուցված ծառայությունների ընդհանուր գումարը, այդ թվում՝ - Պատվիրատուի կողմից ընդունված	
3	Հաշվետու ժամանակաշրջանում պատվիրատուի կողմից հատկացված ընդհանուր գումարը, այդ թվում՝ - ընթացիկ ֆինանսավորում - պարտքի մարում	
4	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում պատվիրատուի պարտքը կատարողին, այդ թվում՝ - Պատվիրատուի կողմից ընդունված	

- կատարողի պարտքը պատվիրատուին
+ պատվիրատուի պարտքը կատարողին

Պետական մարմին	**Կազմակերպություն**
Առողջապահության նախարարություն	«Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ, Ռուբինյանց 29/3
Հասցե՝ ք.Երևան,Կառավարական տուն 3,	ֆինանսների նախարարության
Բանկ՝ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011005278 ՀՎՀՀ 02507171	Հ/Հ 900018001967 ՀՎՀՀ 02510167
	Տնօրեն՝
HAKOBYAN VAHE 3514770623 Digitally signed by HAKOBYAN VAHE 3514770623 DN: cn=HAKOBYAN VAHE 3514770623, c=AM Date: 2019.02.20 15:09:26 +04'00'	SHIRINYAN ANNA 7307540096 Աննա Շիրինյան

Հավելված 7
.07. 02. 2019թ. NԱՆ ԴՏՊ-ՀԳԳ-1
Պայմանագրի

Պահանջվող հաշվետվություններ և վերջիններիս ներկայացման վերջնաժամկետների ժամանակացույց

N	Անվանում	Հաշվետվության ներկայացման վերջնաժամկետ
1	**Ամսական հաշվետվություններ**	
2	Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն (ամսական/տարեկան)՝ Հավելված 3, Ֆինանսական հաշվետվություն՝ Հավելված 4	Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, ոչ ուշ քան 5-րդ աշխատանքային օրը
3	**Եռամսյակային հաշվետվություններ**	
4	Հանձնման-ընդունման ակտ Հավելված 6	Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, ոչ ուշ քան 5-րդ աշխատանքային օրը
5	**Տարեկան**	
6	Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն (տարեկան)՝ Հավելված 3, Ֆինանսական հաշվետվություն՝ Հավելված 4 (տարեկան)	Մինչև դեկտեմբերի 25-ը ժամանակաշրջանի ավարտից հետո

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան,Կառավարական տուն 3,

Բանկ՝ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն Հ/Հ 900011005278

ՀՎՀՀ 02507171

HAKOBYAN VAHE 3514770623
Digitally signed by HAKOBYAN VAHE 3514770623
DN: cn=HAKOBYAN VAHE 3514770623, c=AM
Date: 2019.02.20 10:42:37 +04'00'

____

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ, Ռուբինյանց 29/3

ֆինանսների նախարարության

Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Հ/Հ 900018001967
ՀՎՀՀ 02510167
Տնօրեն՝

___________ Աննա Շիրինյան

(ստորագրություն)